ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Լոռու մարզի Քոբայրավանք համալիրի գլխավոր եկեղեցուն կից մատուռի ամրակայման և տանիքի նորոգման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.05.2022թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	info@denergy.am

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	3246200	20250000	20250000*

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին;

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և **«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին** հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ մայիսի 20-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.05.2022թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

Բացակայում է՝ «ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը

8. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

8.1 **«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ»** ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով, վերջինիս հայտով ներկայացված գնային առաջարկը, որը գերազանցում է նախահաշվային գինը, թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.1 կետը՝ մերժել **«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ»-ի** հայտը՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Լուսինե Իգիթյան

---------- Սուրեն Շաքարյան

---------- Արմինե Ստեփանյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/